ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2026 թվականի N 550 - Ա

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 22-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված շարժական գույքը (այսուհետ՝ գույք) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1667-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին համապատասխան՝ օտարել էլեկտրոնային աճուրդով՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել՝

1) որ առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կկազմակերպվի ևս մեկ աճուրդ՝ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով գույքի գնահատված արժեքի 15 տոկոսի չափով.

2) որ գնորդը պարտավոր է վճարել նաև գույքի արժեքի որոշման ծառայությունների վճարը (ներառյալ ավելացված արժեքի հարկը), որը ենթակա է վճարման աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում և չի համարվում գույքի վաճառքի գնի մաս:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) գնորդի հետ պայմանագրի կնքման վերաբերյալ կոմիտեից համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո վեցամսյա ժամկետում գնորդի հետ իրականացնել գույքի հանձնման-ընդունման աշխատանքներ.

2) գնորդի հետ հանձնման-ընդունման աշխատանքների ավարտից հետո եռօրյա ժամկետում կոմիտեին ներկայացնել տեղեկանք փաստացի հանձնված գույքի քանակի վերաբերյալ:

4. Կոմիտեի նախագահին՝

1) գնորդի կողմից վճարումներն իրականացնելուց հետո մեկամսյա ժամկետում գնորդի հետ կնքել գույքի օտարման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված տեղեկանքը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից ստանալուց հետո կարող է իրականացնել գնային վերահաշվարկ՝ հիմք ընդունելով փաստացի հանձնված-ընդունված գույքը.

2) սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված տեղեկանքը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում ըստ անհրաժեշտության գնորդի հետ կատարել գնային վերահաշվարկ.

3) մինչև սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված գնային վերահաշվարկ իրականացնելը՝ գնորդի կողմից վճարված աճուրդի վաճառքի գումարը պահել կոմիտեի աճուրդի ժամանակավոր (դեպոզիտ) հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ